ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՓԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի դոցենտ
https://orcid.org/0000-0002-5342-9121

ԾՈՎԻՆԱՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0001-5927-7213

ԳԱՐԻԿ ՍԻՐՈՅԱՆ
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի դոցենտ
https://orcid.org/0000-0001-5599-6288

ԼԻԱՆԱ ՖԻԴԱՆՅԱՆ
ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու
https://orcid.org/0000-0002-1990-5614

ՄԱՐԻԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ասպիրանտ
https://orcid.org/0000-0002-5013-9241

ՀԱՍՄԻԿ ՔԱՐԱՄՅԱՆ
ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի ուսանող
https://orcid.org/0000-0003-4217-6621

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԵՐԻ ԷՄՊԻՐԻԿ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայ-ադրբեջանական հակամարտության սրման ներկա փուլում, երբ հատկապես սահմանամերձ բնակավայրերի ամրացումը դառնում է օրվա հրամայական, գյուղական տարածքների կայուն զարգացումը հրատապ լուծում պահանջող գերխնդիր է: Գաղտնիք չէ, որ Հայաստանի գյուղական բնակավայրերում ներդրումային

և զբաղվածության հնարավորությունները սահմանափակ են, և, որպես հետևանք, հիմնական մարտահրավերներ են մնում ծերացող բնակչության և երիտասարդների արտագաղթի ցուցանիշները: Այս ոչ ցանկալի գործընթացների կարգավորման հիմնական ուղիներից մեկը գյուղի սոցիալական զարգացումն ու գյուղատնտեսության մրցունակության բարձրացումն է:

Մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացումը և գյուղական բնակչության կենսամակարդակի աստիճանական բարելավումը էական նախապայմաններ կստեղծեն վերոնշյալ գերխնդրի լուծման և երկրի պաշտպանունակության մակարդակի բարձրացման համար: Ուստի ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ ռազմավարական տեսանկյունից հետազոտական թեման արդիական է և հրատապ:

Հիմնաբառեր. *գյուղատնտեսության մրցունակություն, գյուղական տարածքների կայուն զարգացում, գյուղատնտեսական մշակաբույսեր, աստիճանակարգում, բերքատվություն, շահութաբերություն*

JEL: O18, P25
DOI: 10.52174/1829-0280_2022.1-94

Ներածություն: Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունը ավանդաբար երկրի տնտեսության առաջատար ճյուղերից մեկն է: Հաշվի առնելով պարենային անվտանգության հիմնախնդիրը և գյուղական տարածքների զարգացման առաջնահերթությունը, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում առկա մարտահրավերները՝ կարևորվում է գյուղատնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացումը: Նշված միջոցառումները պետք է առավելապես ուղղված լինեն գյուղատնտեսության ոլորտում համապատասխան իրավական հիմքերի ձևավորմանը, տնտեսավարողների համար ներդրումների բարենպաստ պայմանների ապահովմանը, գյուղատնտեսության և գյուղական բնակավայրերի ենթակառուցվածքների զարգացմանը, արտահանման ուղղվածություն ունեցող արտադրության խթանմանը, գիտության և տեխնոլոգիաների նոր նվաճումների ներդրմանն ու մարդկային կապիտալի զարգացմանը: Աներկբա է, որ վերջնարդյունքում այս ամենը կհանգեցնի գյուղատնտեսության ոլորտի մրցունակության բարձրացմանը:

Առանձնահատուկ կարևորվում է գյուղատնտեսության մրցունակության բարձրացումը ներքին և արտաքին շուկաներում, որը, գլոբալ առումով, կնպաստի գյուղմթերքների իրացման հիմնախնդրի լուծմանը: Վերջինս թույլ կտա իրական հնարավորություններ ստեղծել արտադրողների կայուն եկամուտների և ինտենսիվ տեխնոլոգիաների ներդրման ֆինանսական միջոցների ապահովման համար:

Գյուղատնտեսական ապրանքների մրցունակության բարձրացման խնդիրն արդիական է Հայաստանի Հանրապետության, մասնավորապես՝ Վայոց ձորի և Արարատի մարզերի համար, քանի որ անկայունության և շուկայի կառավարման փորձի պակաս ունեցող իրավիճակում գտնվող գյուղատնտեսական ոլորտի ընկերությունները պետք է մրցակցեն ներքին շուկա մուտք գործող խոշոր արտասահմանյան ընկերությունների հետ:

Գրականության ակնարկ: Գյուղատնտեսության մրցունակության բարձրացումը պետական ագրարային քաղաքականության հիմնարար դրույթներից

մեկն է, որը որոշում է դրա հաջողությունը ներքին և համաշխարհային շուկաներում: Գյուղատնտեսական արտադրանքի աճող կարիքները առավելագույնս արդյունավետ բավարարելու նպատակով գյուղատնտեսության մրցունակության բարձրացումը հատկապես կարևոր է դառնում:

Տնտեսագիտական գրականության մեջ «մրցունակություն» հասկացությունն ավելի ու ավելի հաճախ է օգտագործվում, որն ընդունելի է տնտեսական քաղաքականության վերաբերյալ պաշտոնական փաստաթղթերում: Այնուամենայնիվ, մրցունակության սոցիալ-տնտեսական էությունը դեռևս վիճելի է և օգտագործվում է տարբեր առումներով. դրա բազմաթիվ մեկնաբանություններ կան՝ սկսած լայնից, պնդելով, որ ունիվերսալ է, մինչև նեղ՝ ուղղված հետազոտության որոշակի օբյեկտի:

Տնտեսագիտական գրականության մեջ «մրցակցություն» հասկացությունը նոր չէ: Մերկանտիլիստները առաջիններից էին, որ վերլուծեցին դա 15–17-րդ դարերում: Ա. Սմիթը համարվում է մրցակցության դասական հայեցակարգի հիմնադիրը[1]: Մ.Պորտերը կատարել է «մրցակցություն» և «մրցունակություն» հասկացությունների մանրամասն ուսումնասիրություն[2]: Երկրի մրցունակության վերլուծությանը և դրա քանակական գնահատմանը մեծ ուշադրություն է դարձվում Համաշխարհային տնտեսական ֆորումի փորձագետների կողմից մշակված Համաշխարհային մրցունակության զեկույցում[3]: Գյուղատնտեսության մրցունակության տեսական սահմանման և դրա քանակական գնահատման մեթոդաբանության խնդիրները դիտարկվում են Լ. Լատրուֆի [4] աշխատություններում, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության փորձագետների ուսումնասիրություններում[5]:

Գյուղատնտեսական արտադրության մրցունակության և արդյունավետության վրա ազդող գործոնների վերլուծությունն իրականացվել է Կ. Սաուբանովի[6], Ե. Յուրկովայի[7], Ջ. Ալստոնի, Յ. Բեդդովի, Ֆ. Գարդեյի աշխատություններում[8], ինչպես նաև Վ. Գուսակովի[9], Տ. Լենսկայայի[10], Ս. Պելիխի,

---

[1] Տե՛ս **Смит А.,** Исследование о природе и причинах богатства народов. М.: Эконом; Ключ, 1993, 475 էջ:

[2] Տե՛ս **Портер М.,** Конкуренция (пер. с англ.). М.: Изд. дом «Вильямс», 2005, 608 էջ:

[3] Տե՛ս **Schwab K.,** The Global Competitiveness Report 2013–2014. World Economic Forum. Mode of access, http://www3.weforum.org/docs/ WEF_GlobalCompetitivenessReport_2013-14.pdf>

[4] Տե՛ս **Latruffe L.,** Competitiveness, Productivity and Efficiency in the Agricultural and AgriFood Sectors: OECD Food, Agriculture and Fisheries Papers N 30. OECD iLibrary. Mode of access, <http://www.oecd-ilibrary.org/agriculture-and-food/competitiveness-productivity-and-efficiency-in-the-agricultural-and-agri-food-sectors_5km91nkdt6d6-en?crawler=true>

[5] Տե՛ս Fostering Productivity and Competitiveness in Agriculture OECD [Electronic resource] // Organisation for Economic Cooperation and Development. 2011. Mode of access, <http://browse.oecdbookshop.org/oecd/pdfs/product/5111131e.pdf>

[6] Տե՛ս **Саубанов К. Р.,** Конкурентоспособность регионального сельского хозяйства в приволжском федеральном округе: дис. канд. экон. наук: 08.00.05. Казань, 2010, 176 էջ:

[7] Տե՛ս **Юркова Е. А.,** Конкурентоспособность сельскохозяйственных предприятий и влияние инновационного потенциала АПК на ее повышение: дис. канд. экон. наук: 08.00.05. М., 2013, 159 էջ:

[8] Տե՛ս **Alston J. M.,** Agricultural Research, Productivity, and Food Commodity Prices. Giannini Foundation. Mode of access, <http://giannini.ucop.edu/media/are-update/files/articles/v12n2_5.pdf>

[9] Տե՛ս **Гусаков В. Г.,** Новейшая экономика и организация сельского хозяйства в условиях становления рынка: научный поиск, проблемы, решения. Минск, Ин-т системных исследований в АПК, 2008, 431 էջ:

Վան Յաոտյանի[11] ուսումնասիրություններում, որոնք հաշվի են առել տեղի՝ հայրենական գյուղատնտեսության զարգացման առանձնահատկությունները:

Մ. Պորտերը զգալի ներդրում ունեցավ մրցունակության վերլուծության մեջ, ներկայացրեց մրցակցային առավելությունների ադամանդի գաղափարը, որը բաղկացած է գործոնների չորս խմբերից, որոնք որոշում են ընկերության, արդյունաբերության և երկրի մրցունակությունը: Այս խմբերը ներառում են արտադրության գործոնների, պահանջարկի վիճակի, հարակից և օժանդակ արդյունաբերության, կայուն ռազմավարության, կառուցվածքի և մրցակցության պայմանները: Ըստ Մ. Պորտերի՝ կառավարության քաղաքականությունը և պատահական իրադարձությունները կարող են էական ազդեցություն ունենալ երկրի, ճյուղի կամ ընկերության մրցունակության վրա[12]:

Տ. Լենսկայան բացահայտում է գյուղատնտեսության ոլորտում մրցունակությունը որոշող գործոնների վեց հիմնական խմբեր.

- գյուղատնտեսական ռազմավարությունը և քաղաքականությունը,
- համապետական տնտեսական միջոցառումները,
- ագրոարդյունաբերական համալիրի իրավական պայմանները և օրենսդրական կարգավորումը,
- գյուղատնտեսական ձեռնարկությունների սեփական միջոցառումները,
- արտադրական և շուկայավարման գործունեության արդյունքայնությունն ապահովող գործոնները,
- կառավարման սոցիալ-տնտեսական արդյունքները, որոնք ապահովում են մրցունակության ուժգնացումը[13]:

Քննարկելով տարածաշրջանային գյուղատնտեսության մրցունակությունը՝ Սաուբանովը առանձնակի ուշադրություն է դարձնում դրա բարելավման այնպիսի գործոնների, ինչպիսիք են բարենպաստ հողային և կլիմայական պայմանները, բարձր որակավորում ունեցող կադրերի առկայությունը և բավարար քանակությամբ աշխատանքային ռեսուրսները, գյուղատնտեսական կազմակերպություններում ստացված անասնաբուծության և բուսաբուծության արտադրանքի վերամշակման խորությունը, ներդրումները՝ որպես նորարարական տեխնոլոգիաներ ներգրավելու և նյութատեխնիկական բազան արդիականացնելու միջոց, մեքենայացման և սոցիալական ու արտադրական ենթակառուցվածքների բարձր մակարդակը, ինչպես նաև ռեսուրսախնայող տեխնոլոգիաների կիրառումը[14]:

Յուրկովայի կարծիքով՝ «գյուղատնտեսական ձեռնարկության մրցունակության ամենակարևոր գործոնը դրա արտադրանքի մրցունակությունն է»: Միևնույն ժամանակ, ապրանքների հիմնական բնութագրիչներ են որակը, գինը և իրացման պայմանները[15]:

---

[10] Տե՛ս **Ленская Т. И.,** Организационно-экономические факторы повышения конкурентоспособности продукции АПК: дис. канд. экон. наук: 08.00.05. Минск, 2013, 152 էջ:

[11] Տե՛ս **Пелих С. А.,** Инновационно-инвестиционная среда в агропромышленном комплексе Китая и Беларуси: анализ, проблемы, решения / С. А. Пелих, Ван Яотянь. Минск: Право и экономика, 2012, 176 էջ:

[12] Տե՛ս **Портер М.,** նշվ. աշխ.:

[13] Տե՛ս **Ленская Т. И.,** նշվ. աշխ., էջ 87:

[14] Տե՛ս **Саубанов К. Р.,** նշվ. աշխ., էջ 38–53:

[15] Տե՛ս **Юркова Е. А.,** նշվ. աշխ., էջ 38:

Չնայած բազմաթիվ ուսումնասիրություններին՝ ներկայիս տնտեսագիտական գրականության մեջ հստակ չեն գյուղատնտեսության մրցունակության բարձրացման հիմնական պայմանները վերլուծելու տարբերակները: Հետևաբար, կարևոր է դառնում ՀՀ մարզերի՝ այս ուղղությամբ կատարվող ուսումնասիրությունը՝ ընդգծելով գյուղատնտեսության մրցունակության էությունն ըստ այս եզրույթի վերլուծության տարբեր մոտեցումների, բացահայտելով և ներկայացնելով դրա գործոնները:

Հետազոտության մեթոդաբանություն: Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ չկա գյուղատնտեսության մրցունակության գնահատման միասնական մոտեցում: Արևմտյան հետազոտողներն ավելի շատ հակված են այս հասկացության քանակական գնահատմանը: Նրանց նպատակն է բացահայտել գյուղատնտեսության ոլորտի արդյունավետության վրա ազդող մի շարք գործոններ, քանակապես գնահատել դրանք և հաշվարկել մրցունակության ամփոփ ինդեքսը: Միևնույն ժամանակ, առանձին ընկերությունների մրցունակությունը հաճախ օգտագործվում է որպես վերլուծության օբյեկտ: Ռուսական գրականության մեջ առավել մեծ ուշադրություն է դարձվում գյուղատնտեսության մրցունակության վրա ազդող գործոնների վերլուծությանը, չի անտեսվում, սակայն, վիճակագրական մեթոդների կարևորությունը մրցունակության գնահատման համար: Առաջարկվում են այս ցուցանիշի գնահատման տարբեր ինդեքսներ և մեթոդներ:

Կարծում ենք՝ գյուղատնտեսության մրցունակության վրա ազդող գործոնների քանակը մեծ է, և դրանց մասնաբաժինը մրցունակության ընդհանուր ցուցանիշում մեծապես տատանվում է՝ կախված տարածաշրջանից, երկրից և այլ չափանիշներից: Ուստի դժվար է կատարել մրցունակության ճշգրիտ քանակական գնահատում: Այնուամենայնիվ, գոյություն ունեն մրցունակության մի շարք չափանիշներ, որոնք անչափ կարևոր դեր են խաղում գյուղատնտեսության մեջ՝ աշխարհի գրեթե բոլոր երկրներում: Գյուղատնտեսության ոլորտում միասնական մոտեցման բացակայությունը և բազմաթիվ գործոնների առկայությունը հանգեցնում է այս խնդրի ավելի մանրամասն քննարկման անհրաժեշտությանը. հարկ է կատարել դասակարգում, որը հաշվի կառնի գյուղատնտեսության ոլորտի զարգացման ժամանակակից միտումները:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են համակարգային մոտեցման, ինչպես նաև համեմատական վերլուծության ու համադրման, տվյալների բազաների վիճակագրական վերլուծության և պատճառահետևանքային կապերի ուսումնասիրության մեթոդները:

Հետազոտության համար տեղեկատվական և մեթոդական հիմք են հանդիսացել նաև ուսումնասիրությունները, որոնք, մասնավորապես՝ ներառել են քաղաքականության փաստաթղթերի, ռազմավարությունների քննություն և վերլուծություն, համապատասխան հետազոտական, վերլուծական նյութերի և գրականության ուսումնասիրություն, արդյունքների համադրում:

Ներկայացվող հետազոտության շրջանակներում կիրառվել է նաև ժամանակային շարքերի վերլուծության մեթոդը, որի օգնությամբ վերլուծվել են Վայոց ձորի և Արարատի մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք ցուցանիշներ: Նկարագրական վիճակագրական վերլուծության մեթոդի

միջոցով իրականացվել են մի շարք միջին, հարաբերական ցուցանիշների գնահատում և վերլուծություն, ինչպես նաև ցուցանիշների համախմբի կառուցվածքի և կառուցվածքային տեղաշարժերի ուսումնասիրում: Մասնավորապես՝ վերլուծություններ են կատարվել ըստ գյուղատնտեսական նշանակության հողերի, գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունների, գյուղատնտեսության համախառն արտադրանքի և բերքատվության, անասնաբուծական հիմնական արտադրանքի արտադրության ցուցանիշների:

Վերլուծություն: Ագրոարդյունաբերական համալիրը առանձնահատուկ նշանակություն ունի երկրի տնտեսության մեջ: Դա տնտեսության հիմնական ոլորտներից մեկն է, որը կարևոր դերակատարում ունի հասարակության բնականոն կենսագործունեության ապահովման առումով: Ագրոարդյունաբերական համալիրը ներառում է տնտեսական և արդյունաբերական կապեր ունեցող ճյուղեր, որոնք մասնագիտանում են գյուղատնտեսական ապրանքների արտադրության, դրանց վերամշակման և պահեստավորման, ինչպես նաև գյուղատնտեսության և վերամշակող արդյունաբերության արտադրական միջոցներով ապահովման մեջ:

Ագրարային ոլորտի պետական կարգավորումը դիտարկվում է որպես միջոցառումների համակարգ, որի կիրառման արդյունքում հաղթահարվում են շուկայի ծայրահեղ դրսևորումները, շեշտադրվում են հասարակության սոցիալական սպասումները, ստեղծվում են զարգացման նպաստավոր պայմաններ[16]:

Երկարաժամկետ հեռանկարում գյուղական բնակչության բարեկեցության մակարդակն ու տարածքային համաչափ զարգացումը կախված են գյուղատնտեսության մրցունակության բարձր աստիճանի հասնելու կարողությունից:

Անդրադառնալով ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման և ոլորտի մրցունակության բարձրացման հիմնահարցերին՝ անհրաժեշտ է նշել, որ 2020 թվականի ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող տվյալների ամփոփմամբ ստացված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներով տնտեսական ակտիվության մակարդակը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 92.5%, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 101.4%: 2020 թվականի տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ում կազմել է 11,7%[17]:

Հայաստանում գյուղատնտեսությունը կարող է դառնալ ժամանակակից, բարգավաճող և բազմազանեցված տնտեսության առաջնային հիմնասյուներից մեկը: Դա երկրի տնտեսական աճի, բնակչության կյանքի որակի բարելավման, աղքատության մեղմման, կայուն և բարձր վարձատրվող աշխատատեղերի և ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների

---

[16] Տե՛ս **Ավետիսյան Ս.Ս., Գրիգորյան Ա.Վ.,** Պարենային և առաջին անհրաժեշտության ոչ պարենային ապրանքների շուկաների բնորոշ գծերը և կարգավորման կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Տնտեսագետ», 2015, էջ 48:

[17] Տե՛ս Տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, 2020, Եր., 2021, էջ 5, https://mineconomy.am/media/14702/%21Programs_Arm4.pdf

ստեղծման մեծ ներուժ ունի: ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը 1999-2020 թթ. աճել է շուրջ 2.6 անգամ:

Գյուղատնտեսությունը որպես ոլորտային գերակայություն դիտարկելն ունի երկու սկզբունքային հիմնավորում: Նախ՝ գյուղատնտեսությունը արտահանման ներուժ ունեցող ենթաճյուղերից մեկի՝ սննդի արդյունաբերության արժեքային շղթայի կարևորագույն օղակն է: Երկրորդը՝ գյուղատնտեսության զարգացումը այդ ոլորտում արտադրողականության աճի և գյուղական վայրերում ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների ստեղծման, ինչպես նաև տարածքային համաչափ զարգացում ապահովելու առումով չափազանց կարևոր է[18]:

Աղյուսակ 1-ի տվյալները վկայում են, որ 2015–2020 թթ. ինչպես ամբողջ հանրապետության, այնպես էլ Արարատի և Վայոց ձորի մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքն ունի նվազման միտում: Ե՛վ ՀՀ, և՛ Արարատի ու Վայոց ձորի մարզերի գյուղատնտեսության համախառն արտադրանքի կրճատումը պայմանավորված է բուսաբուծության արտադրանքի նվազմամբ, մինչդեռ անասնաբուծության ոլորտում պատկերը հակառակն է. հանրապետությունում աճել է 9.7%-ով, իսկ Արարատի և Վայոց ձորի մարզերում, համապատասխանաբար՝ 8.0%-ով և 13.5%-ով:

Աղյուսակ 1

ՀՀ, Արարատի և Վայոց ձորի մարզերի գյուղատնտեսության համախառն արտադրանքը[19]

Ընթացիկ գներով, մլրդ դրամ

	2015	2016	2017	2018	2019	2020
			Ընդամենը			
Հայաստանի Հանրապետություն	945.4	878.5	908.6	892.9	853.3	833.3
Արարատի մարզ	137.6	134.9	125.0	124.8	127.2	125.0
Վայոց ձորի մարզ	21.4	21.9	24.0	22.3	21.1	21.8
			Բուսաբուծություն			
Հայաստանի Հանրապետություն	550.0	486.7	469.3	415.8	410.9	399.5
Արարատի մարզ	108.9	106.3	93.0	91.1	95.1	94.0
Վայոց ձորի մարզ	6.6	7.6	7.3	5.7	4.9	5.0
			Անասնաբուծություն			
Հայաստանի Հանրապետություն	395.4	391.8	439.3	477.1	442.4	433.8
Արարատի մարզ	28.7	28.6	32.0	33.7	32.1	31.0
Վայոց ձորի մարզ	14.8	14.3	16.7	16.6	16.2	16.8
			Տեսակարար կշիռը, %			
Հայաստանի Հանրապետություն	100	100	100	100	100	100
Արարատի մարզ	14.6	15.4	13.8	14.0	14.9	15.0
Վայոց ձորի մարզ	2.3	2.5	2.6	2.5	2.5	2.6

[18] Տե՛ս Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020–2030 թվականների ռազմավարություն, էջ 3, https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf

[19] https://www.armstat.am/file/article/marzer_2021_12.pdf

Մինչ շահութաբերության հաշվարկը, գնահատենք առանձին մշակաբույսերի բերքատվության շարժընթացը 2015–2020 թթ.՝ ըստ դիտարկվող մարզերի:



Գծապատկեր 1. ***Գյուղատնտեսական մշակաբույսերի միջին բերքատվության շարժընթացը 2015–2020 թթ. Վայոց ձորի մարզում (գ/հա)[20]***

Կարտոֆիլի բերքատվությունը 2020 թ., նախորդ տարվա համեմատությամբ, աճել է 5.4 տոկոսով, սակայն 2015 թ. համեմատությամբ նվազել է 26.7 տոկոսով և կազմել 138.4 գ/հա: Նշենք նաև, որ 2015–2020 թթ. մարզում կարտոֆիլի ցանքատարածությունները ևս նվազել են 74 հա-ով (36.9 տոկոսով), ինչի հաշվին համախառն բերքը ավելի քան կրկնակի նվազել է (54.1 տոկոսով):

Ինչ վերաբերում է բոստանային մշակաբույսերին, ապա դրանց բերքատվությունը, ինչպես և կարտոֆիլինը, 2018–2020 թթ. ունի աճի միտում, սակայն, 2015 թ. համեմատությամբ, 2020 թ. նվազել է 38.2 տոկոսով: Բոստանային մշակաբույսերի ցանքատարածությունները ևս զգալիորեն կրճատվել են (24 հա-ով), սակայն համախառն բերքն ավելացել է՝ ի հաշիվ 2019–2020 թթ. բերքատվության կտրուկ աճի:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի և' բերքատվությունը, և' ցանքատարածությունները 2015–2020 թթ. նվազել են գրեթե կրկնակի, ինչի արդյունքում համախառն բերքը ևս կրճատվել է՝ 6.7 հազ. տոննայից մինչև 1.8 հազար տոննա: Սա, իհարկե, լուրջ խնդիր է պարենային անվտանգության առումով, քանի որ ցորենը համարվում է ռազմավարական նշանակության պարենամթերք:

Պտղի և հատապտղի տնկարկների բերքատվության շարժընթացի ուսումնասիրությունից երևում է, որ չնայած 2015–2020 թթ. վերջինիս ցանքատարածություններն աճել են 16.7 տոկոսով, այնուհանդերձ, բերքատվության շուրջ 60 տոկոս կրճատման պատճառով համախառն բերքը ևս կրճատվել է 58.3 տոկոսով, ինչը վկայում է այդ ցանքատարածությունների օգտագործման ցածր արդյունավետության մասին:

Հետաքրքիր շարժընթաց է դրսևորում խաղողի տնկարկների բերքատվությունը և համախառն բերքը: Այսպես՝ չնայած վերջին տարիներին

[20] https://armstat.am/file/article/marzer_2021_12.pdf

խաղողի տնկարկների ցանքատարածություններն էականորեն չեն ավելացել, սակայն համախառն բերքը զգալիորեն ավելացել է բերքատվության աճի շնորհիվ: Բերքատվության կտրուկ աճ է նկատվում հատկապես 2019–2020 թթ., երբ խաղողի և՝ բերքատվությունը, և՝ համախառն բերքը կրկնակի աճել են: Դա կարող է կապված լինել պետական աջակցության ծրագրերի կիրառման, նորարարական տեխնոլոգիաների, հակակարկտային կայանների ներդրման հետ, ինչը շատ կարևոր է գինեգործությամբ զբաղվող Վայոց ձորի մարզում:

Գնահատվել է Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական արտադրության շահութաբերությունն ըստ առանձին մշակաբույսերի՝ հիմք ընդունելով մարզի 520 գյուղացիական տնտեսությունների հարցման արդյունքները:

Ուսումնասիրելով մարզի 2020 թ. գյուղատնտեսական արտադրանքի իրացման ուղղությունները՝ պարզվում է, որ արտադրված գյուղատնտեսական մթերքների զգալի մասն օգտագործվել է սեփական տնտեսությունում, մասնավորապես՝ հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի 62%-ը (վերամշակվել է 67.8%-ը), բանջարանոցային, բոստանային մշակաբույսերի և կարտոֆիլի 83–86%-ը, ձվի և բրդի 73–76%-ը, կաթի 53%-ը:

Վաճառքի ծավալներով առաջատար է խաղողը (ընդհանուր բերքի 82%-ը), մսամթերքը՝ 69%, մեղրը՝ 37%, կաթը՝ 36%, պտուղ-հատապտուղները՝ 31%:

Հաշվի առնելով, որ բազմամյա տնկարկները հիմնական միջոցներ են, պտուղների և հատապտուղների, ինչպես նաև խաղողի տնկարկների գծով կատարված ծախսերի համար կատարվել է վերահաշվարկ: Այսպես՝ ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի մեթոդաբանության, նշված մշակաբույսերի գծով հաշվետու տարվա ծախսերում ներառված չեն բազմամյա տնկարկների ձեռքբերման ծախսերը, որոնք համամասնորեն բաշխվում են գալիք ժամանակաշրջանի (5 տարվա) ծախսերի վրա և, գումարվելով յուրաքանչյուր տարվա ընթացիկ ծախսերին, կազմում են հաշվետու տարվա ընդհանուր ծախսերը բազմամյա տնկարկների գծով:

Աղյուսակ 2-ում ներկայացնենք պտուղների և հատապտուղների (հնդավոր, կորիզավոր), ինչպես նաև խաղողի տնկարկների ձեռքբերման գծով ծախսերի հաշվարկման մեթոդաբանությունն ըստ սահմանված նորմաների:

Աղյուսակ 2

Պտուղների, հատապտուղների և խաղողի տնկարկների ձեռքբերման ծախսերի հաշվարկը Վայոց ձորի մարզում 2020 թ.

Տնկարկների տեսակը	Տարածությունը (հա)	Տնկիների քանակը (5,5մ x4,5մ հաշվարկային նորմայով)	Միավոր տնկիի գինը (հազ. դրամ)	Գալիք ժամանակաշրջանի ծախսեր՝ բազմամյա տնկարկների մասով (հազ. դրամ)	Տվյալ ժամանակաշրջանին բաժին ընկնող ծախսերը (հազ. դրամ)
Հնդավոր, ընդամենը	40.7	16500 (40.7*10 000)մ^2 / (5.5 **x** 4.5)	0.6	9900 (16500*0.6)	1980 (9900:5)
Կորիզավոր, ընդամենը	40.64	16400	0.6	9840	1968
Ընդամենը	81.34	32900	0.6	19740	3948
Խաղող, ընդամենը	50.79	530 000	0.419	222 070	44 414

Աղյուսակ 2-ի տվյալների հիման վրա հաշվարկենք գյուղատնտեսական մթերքների արտադրությունից ստացվող զուտ շահույթը՝ որպես գյուղացիական տնտեսությունների կողմից ստացված զուտ հասույթի և հաշվարկված ծախսերի տարբերություն: Զուտ հասույթի հաշվարկը կատարվել է գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության ծավալի և դրանց միավորի իրացման միջին տարեկան գնի հիման վրա, այնուհետև հաշվարկվել է 1 հեկտարից ստացվող զուտ եկամուտն ըստ առանձին գյուղատնտեսական մշակաբույսերի:

Աղյուսակ 3

Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերից ստացվող զուտ շահույթի հաշվարկը 2020 թ.[21]

	Աղտոտված տարածքի մեխանիզացիայի և ոչ մեխանիզացիայի ենթարկվող (հա)	Գյուղացիական տնտեսությունների սոստակարգերի ոռոգման միջին գինը 1 խմ-ի համար (դրամ)[22]	Գյուղմթերքների սոստակարգերի ներդրումային ծախսերի գումարը (դրամ. գ.գ.) (1)*(2)	Տնտեսությունների կողմից արտադրված մշակաբույսերի սեփական սպառման համար չծախսված մասի գումարը (դրամ. գ.գ.)	Գյուղմթերքների սոստակարգերի վերջնական ցիկլի համար ստացված զուտ շահույթ (դրամ. գ.գ.) (3) - (4)	Մշակաբույսի հեկտարի ընդհանուր ծախսերը (դրամ)	1 հա-ից ստացված զուտ եկամուտ (դրամ. գ.գ.) (6)/(5)
	1	2	3	4	5	6	7
Հացահատիկային և հատիկընդեղենային մշակաբույսեր	2437.78 (243778 կգ)	127	30 959.806	14 466.8	16 493.006	1652	9.98
Կարտոֆիլ	446.55	112	5001.360	2167.82	2 833.54	125	22.67
Բանջարաոնոցային մշակաբույսեր	1085.61	118	12810.198	4391.0	8419.198	319	26.40
Պտղի և հատապտղի տնկարկներ	3022.74	203.66	61 561.123	17 610.38 (13 662.38+ 3948.0)*	43 950.743	2517	17.46
Խաղողի տնկարկներ	9077.23	149	135 250.727	76 880.54	58 370.187	1202	48.56

Այսպիսով՝ համադրելով Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի բերքատվության և մեր կողմից հաշվարկված զուտ շահույթի ցուցանիշները՝ կարող ենք կատարել որոշակի եզրահանգումներ մարզում մրցակցային առավելություններ ունեցող մշակաբույսերի արտադրության վերաբերյալ, մասնավորապես.

- Մարզում հատկապես բարձր է խաղողի տնկարկներից, բանջարաոնոցային մշակաբույսերից և կարտոֆիլից ստացվող զուտ եկամուտը 1 հա-ի հաշվով, իսկ հացահատիկային մշակաբույսերի համար բավականին ցածր է՝ հաշվի առնելով վերջինիս ապրանքայնության ցածր մակարդակը:

[21] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի Վայոց ձորի մարզային վարչություն:
[22] Տե՛ս https://www.armstat.am/file/article/marzer_2021_16.pdf

- Խաղողի տնկարկներից ստացվող զուտ շահույթը, 1 հա-ի հաշվով, կազմել է 48.6 հազար դրամ, և չնայած վերջին տարիներին դրանց տարածությունները մարզում էականորեն չեն ավելացել, սակայն համախառն բերքը նույնպես զգալիորեն ավելացել է բերքատվության աճի շնորհիվ: Բերքատվության կտրուկ աճ է նկատվել հատկապես 2019–2020 թթ., որի ընթացքում խաղողի և՛ բերքատվությունը, և՛ համախառն բերքը կրկնակի աճել են: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Վայոց ձորի մարզում խաղողն ունի բավականին մեծ պահանջարկ գինու գործարանների կողմից, խաղողագործության զարգացումն այստեղ բավականին հեռանկարային է:

Հետազոտության վերջնարդյունքների ձևակերպման նպատակով գնահատվել են նաև գյուղատնտեսության մրցունակության ցուցանիշներն Արարատի մարզում, և կատարվել է դիտարկվող 2 մարզերի գյուղատնտեսության համեմատական վերլուծություն՝ բացահայտելով դրանց մրցակցային առավելությունները:

Կարելի է արձանագրել, որ Արարատի մարզում զգալիորեն բարձր է բանջարանոցային, բոստանային մշակաբույսերի բերքատվությունը, որը, սակայն, 2015–2020 թթ. ունի նվազման միտում: Այսպես՝ բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունը նշված ժամանակահատվածում նվազել է 18.1%-ով, իսկ ցանքատարածությունները՝ 23.1%-ով, ինչի արդյունքում նվազել է նաև համախառն բերքը 34.5%-ով: Բոստանային մշակաբույսերի բերքատվությունը և ցանքատարածությունները 2015–2020 թթ. նվազել են համապատասխանաբար՝ 17.8% և 48.2%-ով, ինչի հետևանքով համախառն բերքն ավելի քան կրկնակի կրճատվել է (57.5%-ով): Մարզում բարձր է նաև կարտոֆիլի բերքատվությունը, որը 2015–2020 թթ. աճել է 8.7%-ով, սակայն ցանքատարածությունների կրճատման հաշվին համախառն բերքը կրկնակի կրճատվել է:



Գծապատկեր 2. ***Գյուղատնտեսական մշակաբույսերի միջին բերքատվության շարժընթացը 2015–2020 թթ. Արարատի մարզում (գ/հա)***

Այնուհանդերձ, ինչպես երևում է գծապատկեր 2-ից, Արարատի մարզում բոլոր մշակաբույսերի բերքատվությունը 2020 թ. բարձր է հանրապետական

միջին մակարդակից, առավել ևս՝ Վայոց ձորի համապատասխան ցուցանիշներից:

Գծապատկեր 1-ի և 2-ի տվյալները վկայում են, որ ուսումնասիրվող մարզերում մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը հիմնականում նվազման միտում ունի: Դրա վրա ազդում են բազմաթիվ գործոններ, ինչպիսիք են, օրինակ՝ մարզերում առկա ոռոգման խնդիրները, բարձր վերարտադրության սերմացուների, պարարտանյութերի պակասը, նորագույն տեխնոլոգիաների կիրառման ցածր մակարդակը և այլն: Չնայած 2020–2021 թթ. ՀՀ Կառավարության կողմից իրականացվել են գյուղատնտեսության պետական աջակցության մի շարք ծրագրեր, այնուհանդերձ, ոռոգման արդիական համակարգերի ներդրումը, ինտենսիվ այգիների հիմնումը, կարկտապաշտպան համակարգերի կիրառումը և առհասարակ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված վարկերի սուբսիդավորումը պետության կողմից պետք է կրի շարունակական բնույթ և ընդլայնի իր տարածքները, ինչի արդյունքում գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը որոշ չափով կբարձրանա մի քանի տարի անց:



Գծապատկեր 3. ***Գյուղատնտեսական մշակաբույսերի միջին բերքատվության համեմատական վերլուծությունը ՀՀ-ում, Վայոց ձորի և Արարատի մարզերում 2020 թ. (գ/հա)***

Ուսումնասիրության շրջանակներում արձանագրված հիմնախնդիրների լուծման և համեմատությունների ու եզրահանգումների ձևակերպման նպատակով հաշվարկվել է նաև գյուղատնտեսական մշակաբույսերի 2020 թ. շահութաբերությունն Արարատի մարզում՝ վերը նշված մեթոդաբանությամբ:

Արարատի մարզում վերը նշված մեթոդաբանությամբ կատարվել է պտուղների և հատապտուղների, ինչպես նաև խաղողի տնկարկների ձեռքբերման ծախսերի հաշվարկ գալիք 5 տարիների կտրվածքով, որը համամասնորեն բաշխվել է ըստ այդ տարիների և գումարվել յուրաքանչյուր տարվա ընթացիկ ծախսերին:

Աղյուսակ 4

Պտուղների, հատապտուղների և խաղողի տնկարկների ձեռքբերման ծախսերի հաշվարկն Արարատի մարզում 2020 թ.

Տնկարկների տեսակը	Տարածությունը (հա)	Տնկիների քանակը (5,0 մ x 4,0 մ հաշվարկային նորմայով)	Միավոր տնկիի գինը (հազ. դրամ)	Գալիք ժամանակաշրջանի ծախսեր՝ բազմամյա տնկարկների մասով (հազ. դրամ)	Տվյալ ժամանակաշրջանին բաժին ընկնող ծախսերը (հազ. դրամ)	Բազմամյա տնկարկների հողի և այլ հարկեր (հազ. դրամ)	Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)
Հնդավոր, ընդամենը	63	31400	0.9	28260	5652	22462.9	56254.9
Կորիզավոր, ընդամենը	281.5	140700	1	140700	28140		
Ընդամենը	344.5	172100		168960	33792		
Խաղող, ընդամենը	288.2	3002000	0.35	1050700	210140	-	-

Այսպիսով՝ հաշվի առնելով նշված բոլոր առանձնահատկությունները, Արարատի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրության զուտ շահույթի հաշվարկը ներկայացված է աղյուսակ 5-ում: Զուտ շահույթը հաշվարկվել է որպես գյուղմթերքների արտադրությունից ստացվող հասույթի և տնային տնտեսությունների կողմից դրանց արտադրության վրա կատարված ծախսերի (աղյուսակ 4) տարբերություն: Հաշվարկվել է նաև 1 հա-ից ստացվող զուտ եկամուտն ըստ առանձին մշակաբույսերի, որի հիման վրա կատարվել է դրանց աստիճանակարգում:

Աղյուսակ 5

Արարատի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրությունից ստացվող զուտ շահույթի հաշվարկը 2020 թ.[23]

Գյուղատնտեսական մշակաբույսեր	Հավաքատարածությունը ներառյալ տարեսկզբի կենդանի մնացորդը (հա)	Գյուղատնտեսական մշակաբույսերի ընդամենը ստացված բերքը (տոննա)	Մեկ հեկտարից ստացված բերքը (տոննա) (1)*/(2)	Տնտեսությունների կողմից գյուղ. մշակաբույսերի արտադրության վրա կատարված ծախսերը (հազ. դրամ) (տոննա) (3) - (4)	Գյուղ. մշակաբույսերի արտադրության զուտ արդյունքը (հազ. դրամ)	Մշակաբույսի գրաբաժինը (%)	1 հա-ից ստացված զուտ եկամուտը (հազ. դրամ) (5)/(6)
	1	2	3	4	5	6	7
Հացահատիկ և հատիկաընդեղեն	4499.41	127	57142.5	27735.5	29407.0	2568	11.45
Կարտոֆիլ	1115.9	112	12498.1	2818.9	9679.2	508	19.05
Բանջարանոցային մշակաբույսեր	78507.73	118	926391.2	239069.3	687322.0	5110	134.5
Պտուղներ և հատապտուղներ	29755.8	203.66	606 006.623	156 747.5	449 259.123	8661	51.87
Խաղողի տնկարկներ	70 639.5	149	1 052 528.55	390 864.3	661 664.25	4849	136.45

[23] Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի Արարատի մարզային վարչություն:

Արարատի մարզում, միավոր ցանքատարածության հաշվով, հատկապես բարձր է զուտ եկամուտը բանջարանոցային մշակաբույսերից և խաղողի տնկարկներից:

Այսպիսով՝ գյուղատնտեսական արտադրության մրցունակությունը բնութագրվում է ցուցանիշների համակարգով, որոնցից առավել կարևոր են միավոր տարածությունից ստացվող համախառն արտադրանքը և զուտ շահույթը: Այդուհանդերձ, դեռևս գյուղատնտեսական մշակաբույսերի մրցունակությունը գնահատող միասնական ընդհանրական ցուցանիշ գոյություն չունի: Այս նկատառումով՝ առաջարկում ենք գյուղատնտեսական մշակաբույսերի մրցունակությունը գնահատել ընդհանուր ինտեգրալ ցուցանիշի հիման վրա՝ դրանց աստիճանակարգման միջոցով: Այդ նպատակով կարելի է ընտրել դիտարկվող մարզի հիմնական մշակաբույսերի համար մեկից ավելի համադրելի ցուցանիշներ և կատարել դրանց աստիճանակարգում՝ նախ յուրաքանչյուր ցուցանիշի, իսկ հետո՝ ընդհանրացված ցուցանիշի համար: Աստիճանակարգումն առաջարկվում է կատարել հետևյալ մեթոդաբանությամբ. ցուցանիշի ամենափոքր արժեքը գնահատել 100 միավոր և աճողական կարգով հաշվարկել մյուս մշակաբույսերի միավորները: Այնուհետև՝ յուրաքանչյուր մշակաբույսի համար ընտրված ցուցանիշների միավորների հանրագումարով կատարվել է վերջնական աստիճանակարգում: Տվյալ դեպքում Վայոց ձորի և Արարատի մարզերում մշակաբույսերի մրցունակության գնահատման համար ընտրվել է երկու ցուցանիշ. դրանք են՝ համախառն արտադրանքի և զուտ շահույթի ցուցանիշները 1 հա-ի հաշվով, որոնց հիման վրա կատարվել է մշակաբույսերի աստիճանակարգում: Վերջինիս նպատակն է առավել նպատակային ու արդյունավետ դարձնել գյուղատնտեսության պետական աջակցության կամ բյուջետային ծախսերի համակարգը և բարձրացնել գյուղատնտեսության մրցունակությունը դիտարկվող մարզերում: Խնդրի այս դրվածքի պարագայում բյուջետային աջակցությունն առավել նպատակահարմար է ուղղորդել առավել բարձր վարկանիշ ունեցող մշակաբույսերի արտադրության ավելացմանը:

Կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ Վայոց ձորի մարզում առավել բարձր արդյունավետություն են ապահովում բանջարանոցային մշակաբույսերը, կարտոֆիլը և խաղողի տնկարկները, մինչդեռ ներկայումս իրականացվող բուսաբուծության սուբսիդավորման գումարների զգալի մասն ուղղվում է հացահատիկային մշակաբույսերի մշակությանը, որից ստացվող համախառն արտադրանքի և զուտ շահույթի ցուցանիշները մեկ հեկտարի հաշվով ամենափոքրն են:

Արարատի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի աստիճանակարգումը, ըստ նշված ցուցանիշների, ունի հետևյալ պատկերը.

Կատարված վերլուծություններն ու հաշվարկները վկայում են, որ Արարատի մարզում միավոր ցանքատարածությունից և՛ համախառն արտադրանքի, և՛ զուտ շահույթի ցուցանիշներով առավել բարձր արդյունավետություն ունի բանջարանոցային մշակաբույսերի և խաղողի տնկարկների մշակությունը: Չնայած կարտոֆիլի համախառն արտադրանքի ցուցանիշն այստեղ բավականին բարձր է, սակայն վերջինիս ապրանքայնության մակարդակը բավականին ցածր է, և բերքի շուրջ 70 տոկոսը սպառվում է սեփական տնտեսություններում:

Աղյուսակ 6

Վայոց ձորի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի աստիճանակարգումն ըստ 1 հա-ից ստացված համախառն արտադրանքի և զուտ շահույթի ցուցանիշների 2020 թ.

Մշակաբույսը	Գյուղատնտեսական մշակաբույսերի միավորային գնահատումն ըստ տնտեսական արդյունավետության ցուցանիշների							
	Համախառն արտադրանքը 1 հա-ից		Զուտ շահույթը 1 հա-ից		Ընդհանուր միավորները		Զբաղեցրած տեղը	
	տեղը	հազ. դրամ	միավոր	տեղը	հազ. դրամ	միավոր		
1	2	3	4	5	6	7	8	9
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	5	140,97	100	5	9.98	100	200	5
Կարտոֆիլ	2	1550,08	1099,6	3	22.67	227,1	1326,7	2
Բանջարանոցային մշակաբույսեր	1	1768,82	1254,7	2	26.40	264,5	1519,2	1
Պտղի և հատապտղի տնկարկներ	4	344,185	244,2	4	17.46	174,9	419,1	4
Խաղողի տնկարկներ	3	1141,340	809,6	1	48.56	486,6	1296,2	3

Աղյուսակ 7

Արարատի մարզում գյուղատնտեսական մշակաբույսերի աստիճանակարգումն ըստ 1 հա-ից ստացված համախառն արտադրանքի և զուտ շահույթի ցուցանիշների 2020 թ.

Մշակաբույսը	Ըստ տնտեսական արդյունավետության ցուցանիշների գյուղատնտեսական մշակաբույսերի միավորային գնահատումը							
	Համախառն արտադրանքը 1 հա-ից			Զուտ շահույթը 1 հա-ից			Ընդհանուր միավորները	Զբաղեց-րած տեղը
	տեղը	հազ. դրամ	միավոր	տեղը	հազ. դրամ	միավոր		
1	2	3	4	5	6	7	8	9
Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսեր	5	473,71	100	5	11.45	100	200	5
Կարտոֆիլ	3	3193,12	674,1	4	19.05	166,4	840,5	4
Բանջարանոցային մշակաբույսեր	1	4722,36	996,9	2	134.5	1174,7	2171,6	1
Պտղի և հատապտղի տնկարկներ	4	2010,12	424,3	3	51.87	453,0	877,3	3
Խաղողի տնկարկներ	2	4057,27	856,5	1	136.45	1191,7	2048,2	2

Ինչ վերաբերում է հացահատիկային մշակաբույսերի արդյունավետությանը, ապա մեր վերլուծությունը վկայում է, որ չնայած արտադրության արդյունավետությունը բավականին ցածր է, սակայն, օրինակ՝ Արարատի մարզում ընդհանուր ցանքատարածությունների 11,3 տոկոսը (2568 հա) օգտագործվում է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի մշակման համար: Հաշվի առնելով պարենային հաշվեկշռում ցորենի մեծ տեսակարար կշիռը (սպառված էներգետիկ արժեքի ավելի քան 40%-ը), տվյալ պարենամթերքի ռազմավարական նշանակությունը և ապահովվածության դեռևս ցածր մակարդակը՝ առաջնահերթ խնդիր է մնում սեփական արտադրության հաշվին հացամթերքով ապահովվածության մակարդակի բարձրացումը, որը բխում է նաև հանրապետության գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի լիարժեք օգտագործման անհրաժեշտությունից: Դրանով է պայմանավորված պետության նման վարքագիծը՝ ուղղված հացահատիկային մշակաբույսերի արտադրության խթանմանը: Գյուղացիական տնտեսությունների տեսանկյունից հացահատիկային մշակաբույսերի արտադրությունից ստացվող զուտ եկամուտն ամենացածրն է (աղյուսակ 6 և 7), քանի որ ապրանքայնության մակարդակը շատ ցածր է, այսինքն՝ հիմնականում սպառվում է սեփական տնտեսություններում:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ դիտարկվող մարզերում գյուղական բնակավայրերի բարեկեցության բարձրացման և ոլորտի զարգացման պահանջների բավարարման նպատակով պետք է ներդրումներ կատարել եկամտաբեր գործունեության դիվերսիֆիկացման և զարգացման ուղղությամբ[24]: Դա նշանակում է, որ Վայոց ձորի և Արարատի մարզերում ցանքատարածությունների կառուցվածքի փոփոխման արդյունքում կարելի է ապահովել գյուղատնտեսության ոլորտի առավել բարձր արդյունավետություն և պետական միջոցները հատկացնել հատկապես այն մշակաբույսերի մշակմանը, որոնք ունեն մրցակցային առավելություններ հենց այդ մարզերում:

Եզրակացություններ: Կատարված ուսումնասիրությունները, փաստական և տեղեկատվական նյութի ամփոփումը, ընդհանրացումն ու վերլուծությունը ցույց են տալիս, որ Վայոց ձորի մարզում առավել բարձր արդյունավետություն են ապահովում բանջարանոցային մշակաբույսերը, կարտոֆիլը և խաղողի տնկարկները, մինչդեռ ներկայումս բուսաբուծության սուբսիդավորման գումարների զգալի մասն ուղղվում է հացահատիկային մշակաբույսերի արտադրական զարգացմանը: Արարատի մարզում բերքատվության և զուտ շահույթի ցուցանիշներով առավել բարձր արդյունավետություն են ապահովում բանջարանոցային մշակաբույսերը և խաղողի տնկարկները:

Չնայած Արարատի մարզում ընդհանուր ցանքատարածությունների 11,3 տոկոսն օգտագործվում է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի մշակման համար, այնուամենայնիվ, գյուղատնտեսական այդ արտադրության արդյունավետությունը բավականին ցածր է:

Ըստ կատարված հետազոտության արդյունքների՝ կարելի է եզրակացնել, որ գյուղատնտեսության մրցունակությունը կախված է նաև ցանքաշրջա-

[24]Տե՛ս Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020–2030 թվականների ռազմավարություն, էջ 11, https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf

նառության, ցանքատարածությունների կառուցվածքի ժամանակակից համակարգեր կամ որակապես տարբերվող գյուղատնտեսական գործունեության միջավայր ստեղծելու ունակությունից, որոնք տվյալ մարզի գյուղացիական տնտեսություններին թույլ կտան արդյունավետ օգտագործել համայնքի գյուղատնտեսական պաշարներն ու հնարավորությունները: Վայոց ձորի և Արարատի մարզերում գյուղատնտեսական մշակաբույսերի աստիճանակարգման հաշվարկի մեր կողմից առաջարկվող մեթոդաբանության օգտագործումը կարող է դառնալ վերը նշվածի իրականացման գործիքներից՝ մրցունակությունն ընդունելով որպես գյուղատնտեսական ոլորտի արտադրողների արդյունավետ և արտադրողական լինելու ունակություն:

Վայոց ձորի և Արարատի մարզերի աշխարհաքաղաքական դիրքը և տնտեսական անվտանգության շահերը պահանջում են գյուղական բնակավայրերի ամրապնդման, ժողովրդագրական գործընթացների արդյունավետ կառավարման և պարենային անվտանգության մակարդակի բարձրացման նպատակով խելամիտ ագրարային քաղաքականության մշակում և իրականացում: Գյուղատնտեսության զարգացման քաղաքականությունն այս մարզերում պետք է ուղղված լինի գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործմանը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացմանը, բնակլիմայական ռիսկերի մեղմմանն ու տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

Օգտագործված գրականություն

1. Ավետիսյան Ս.Ս., Գրիգորյան Ա.Վ., Պարենային և առաջին անհրաժեշտության ոչ պարենային ապրանքների շուկաների բնորոշ գծերը և կարգավորման կառուցակարգերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., «Տնտեսագետ», 2015:
2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն, https://mineconomy.am/media/10030/Razmavarutyun.pdf
3. Տարեկան հաշվետվություն, Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր, 2020, Եր., 2021, https://mineconomy.am/media/14702/%21Programs_Arm4.pdf
4. Гусаков В. Г., Новейшая экономика и организация сельского хозяйства в условиях становления рынка: научный поиск, проблемы, решения. Минск, Ин-т системных исследований в АПК, 2008.
5. Ленская Т. И., Организационно-экономические факторы повышения конкурентоспособности продукции АПК: дис. … канд. экон. наук: 08.00.05. Минск, 2013.
6. Пелих С. А., Инновационно-инвестиционная среда в агропромышленном комплексе Китая и Беларуси: анализ, проблемы, решения / С. А. Пелих, Ван Яотянь. Минск: Право и экономика, 2012.
7. Портер М., Конкуренция (пер. с англ.). М.: Изд. дом «Вильямс», 2005.

8. Смит А., Исследование о природе и причинах богатства народов. М.: Эконом; Ключ, 1993.
9. Саубанов К. Р., Конкурентоспособность регионального сельского хозяйства в приволжском федеральном округе: дис. канд. экон. наук: 08.00.05. Казань, 2010.
10. Юркова Е. А., Конкурентоспособность сельскохозяйственных предприятий и влияние инновационного потенциала АПК на ее повышение: дис. канд. экон. наук: 08.00.05. М., 2013.
11. Alston J. M., Agricultural Research, Productivity, and Food Commodity Prices / J. M. Alston, J. M. Beddow, P. G. Pardey. // Giannini Foundation. Mode of access, <http://giannini.ucop.edu /media/are-update/files/articles/v12n2_5.pdf>
12. Fostering Productivity and Competitiveness in Agriculture OECD // Organisation for Economic Cooperation and Development. 2011. Mode of access, <http://browse.oecdbookshop.org/oecd/pdfs /product/5111131e.pdf>
13. Latruffe L., Competitiveness, Productivity and Efficiency in the Agricultural and AgriFood Sectors: OECD Food, Agriculture and Fisheries Papers N 30 / L. Latruffe // OECD iLibrary. Mode of access, <http://www.oecd-ilibrary.org/agriculture-and-food /competitiveness-productivity-and-efficiency-in-the-agricultural-and-agri-food-sectors_5km91nkdt6d6-en?crawler=true>
14. Schwab K., The Global Competitiveness Report 2013-2014 / K. Schwab // World Economic Forum. Mode of access, http://www3.weforum.org/docs/ WEF_GlobalCompetitivenessReport_2013-14.pdf>
15. https://www.armstat.am/file/article/marzer_2020_12_.pdf
16. https://armstat.am/file/article/marzer_2021_12.pdf
17. https://www.armstat.am/file/article/marzer_2021_16.pdf

АРПИНЕ ОВАКИМЯН
Доцент Ехегнадзорского филиала АГЭУ

ЦОВИНАР КАРАПЕТЯН
Доцент кафедры макроэкономики АГЭУ,
кандидат экономических наук

ГАРИК СИРОЯН
Доцент Ехегнадзорского филиала АГЭУ

ЛИАНА ФИДАНЯН
Доцент кафедры статистики АГЭУ,
кандидат экономических наук

МАРИАМ ХАЧАТРЯН
Аспирант кафедры макроэкономики АГЭУ

АСМИК КАРАМЯН
Студентка Ехегнадзорского филиала АГЭУ

Конкурентоспособность сельского хозяйства: анализ эмпирических данных по Вайоц дзорской и Араратской областям.– На нынешней стадии обострения армяно-азербайджанских отношений, когда укрепление приграничных территорий приобретает огромное значение, устойчивое развитие сельских районов становится ключевой проблемой, требующей незамедлительного решения. Не секрет, что возможности для инвестиций и трудоустройства в сельских районах Армении ограничены. В результате основными проблемами в этих областях остаются старение населения, эмиграция молодежи в города и другие страны. Одним из путей регулирования указанных процессов является социальное развитие сельских территорий и повышение уровня конкурентоспособности сельского хозяйства. В частности, повышение уровня конкурентоспособности аграрного сектора и улучшение уровня жизни селького населения создадут необходимые предпосылки для решения указанной проблемы и повышения уровня обороноспособности страны. Следовательно, тема исследования является актуальной как с социально-экономической, так и стратегической точки зрения.

Ключевые слова. *конкурентоспособность аграрного сектора, устойчивое развитие сельских территорий, сельскохозяйственные культуры, иерархия, урожайность, прибыльность.*
JEL: O18, P25
DOI: 10.52174/1829-0280_2022.1-94

ARPINE HOVAKIMYAN
Associate Professor of ASUE Yeghegnadzor Branch

TSOVINAR KARAPETYAN
Associate Professor of the Chair of Macroeconomics of ASUE, PhD in Economics

GARIK SIROYAN
Associate Professor of ASUE Yeghegnadzor Branch

LIANA FIDANYAN
Associate Professor of the Chair of Statistics of ASUE, PhD in Economics

MARIAM KHACHATRYAN
PhD Student of the Chair of Macroeconomics of ASUE

HASMIK QARAMYAN
ASUE Yeghegnadzor Branch Student

Competitiveness of Agriculture. Analysis of Empirical Data for Vayots Dzor and Ararat Regions.– The process of sustainable development of rural areas is used in terms of social-economic changes and economic development for rural communities. It is no secret that the opportunities for investment and employment in the rural areas of Armenia are limited; as a result, the main challenges in those areas are the aging population, the emigration of young people to urban areas, and other countries. Infrastructure in rural areas is underdeveloped, and opportunities for improving the quality of life of people are much smaller.

Increasing the competitiveness of the agricultural sector, the gradual improvement of the living standards of the rural population, the establishment of social justice, the establishment of public solidarity are based on the national security strategy of the country. ensuring the balanced territorial development of the country. With the development of the agricultural sector in the country, with the implementation of a targeted policy to create a favorable business environment and create a level playing field, the necessary preconditions will be created to ensure the country's food independence, meet the needs of consumers, create new jobs, improve the socio-economic situation of the rural population. in terms of supply chain, sustainable development, increasing rural incomes and strengthening rural areas. Therefore, from this point of view, the research is topical and urgent.

Keywords. *competitiveness of the agricultural sector, sustainable development of rural areas, balanced territorial development, food security, improvement of the living standard of the rural population.*
JEL: O18, P25
DOI: 10.52174/1829-0280_2022.1-94